ԿԱՅԱՑԵԼ Է «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2025» ՄՐՑԱՇԱՐԸ

13.07.2025 15:39

Կայացել է ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից կազմակերպված «**Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2025**» ֆուտբոլային մրցաշարը:

Մրցաշարին մասնակցում էին փաստաբաններ և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներ:

Եզրափակիչ խաղերում երրորդ մրցանակային տեղի համար պայքարի էին դուրս եկել փաստաբանների «**ՀՊԳ**» և «**Հայաստան աշխարհ**» թիմերը, իսկ առաջին տեղի գավաթի համար թեժ պայքար էր ընթանում «**Ակադեմիա**» և «**Ֆենիքս**» թիմերի միջև:

Դիտարժան և համառ պայքարում մրցանակային երրորդ տեղ գրավեց «**Հայաստան աշխարհ**» թիմը՝ «**ՀՊԳ**» թիմի նկատմամբ գրանցելով առավելություն «**10:4**» հաշվով:

«Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2025» առաջնության՝ **առաջին պատվավոր տեղը և հաղթական գավաթը նվաճեց «Ակադեմիա» թիմը՝** «**Ֆենիքս**» թիմի նկատմամբ ունենալով առավելություն «**11:3**» հաշվով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })